# Չարենցավանի պետական քոլեջ

2025-2026թթ. ուս. տարվա ընդունելություն

# Մեր մասին

ՀՀ ԿԳՄՍՆ <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական հաստատություն է:

Չարենցավանի պետական քոլեջը միակ ուսումնական հաստատությունն է Չարենցավան համայնքում, որտեղ կարող են ուսումը շարունակել Չարենցավան համայնքի հիմնական և ավագ դպրոցների շրջանավարտները: Քոլեջը իրականացնում է ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ նախնական /արհեստագործական/ կրթություն:



Չարենցավանի պետական քոլեջը կրթական համակարգի զարգացման ներում ունեցող լիարժեք կառույց է, որի հիմնական առաքելությունն է

բարենպաստ կրթական միջավայրի ապահովման և ազգային հենքի վրա իրականացվող կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, փոխանցումն ու տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, տարածաշրջանի կրթական, որակի ազգային շրջանակներին (ՈԱՇ),պետական կրթական չափորոշիչներին համապատասխան միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա:

# Միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ կրթություն իրականցնելիս քոլեջը նպատակ ունի



Զարգացնել յուրաքանչյուր սովորողի ինքնուրույն մտածողությունը, սովորելու մոտիվացիան, նախապատրաստել ինքնուրույն կյանքին:



Բարձրացնել դասախոսների և վարպետների մոտիվացիան:



Տարբեր համագործակցությունների արդյունքում մեծացնել զարգացման հնարավորությունները:

# «Ուսանողի ներուժի զարգացումը՝ կարող հասարակության ձևավորման գրավական»



# 2025-2026թթ. ուս. տարվա ընդունելությունն իրականացվում է



Միջին մասնագիտական կրթական ծրագրով



Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով

# Միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելությունն իրականացվում է հետևյալ մասնագիտությունների գծով



Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ



Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում



Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում



Հաշվապահական հաշվառում

# Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ





Գործավար - մասնագետ, ով կարողանում է ճիշտ կառավարել ամեն բան և դրանից ստանալ օգուտ

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 4 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 90.000 դրամ
5. Որակավորումը՝ գործավար

# Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում





# Տեխնիկ-ծրագրավորող - մասնագիտություն նրանց համար, ովքեր չեն վախենում սխալներ անելով ճիշտ լուծում գտնել

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 4 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 90.000 դրամ
5. Որակավորումը՝ տեխնիկ-ծրագրավորող



# Տեխնիկ-ծրագրավորող - մասնագիտություն նրանց համար, ովքեր չեն վախենում սխալներ անելով ճիշտ լուծում գտնել

1. Ընդունելությունն իրականացվում է միջնակարգ կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 2 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 110.000 դրամ
5. Որակավորումը՝ տեխնիկ-ծրագրավորող

# Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում





## Մենեջեր - մասնագետ, ով գտնում է լուծում ցանկացած խնդրի համար և թերությունը դարձնում առավելություն

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 4 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 90.000 դրամ
5. Որակավորումը՝ մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների



# Մենեջեր - մասնագետ, ով գտնում է լուծում ցանկացած խնդրի համար և թերությունը դարձնում առավելություն

1. Ընդունելությունն իրականացվում է միջնակարգ կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 4 տարի
3. Կրթության ձևը՝ հեռակա
4. Տարեկան վարձը՝ 130.000 դրամ
5. Որակավորումը՝ մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների



# Հաշվապահական հաշվառում

Հաշվապահ - մասնագիտություն, նրանց համար, ովքեր սիրում են թվերի աշխարհը

1. Ընդունելությունն իրականացվում է միջնակարգ կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 2 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 110.000 դրամ
5. Որակավորումը՝ հաշվապահ

# Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ընդունելությունն իրականացվում է հետևյալ մասնագիտությունների գծով



Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում



Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում



Խոհարարական գործ



## Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում

## Ներկարար - մասնագիտություն, որը թույլ է տալիս համատեղել ստեղծագործական ներուժը մասնագիտական հմտությունների հետ

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 3 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 60.000 դրամ
5. Որակավորումը՝ ներկարար




# Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում



# Ավտոփականագործ - մասնագիտություն, որը պահանջում է մեծ վարպետություն և ձեռքի շնորհք

*Կանխապայած ավտոմոբիլը նման է կենդանի օրգանիզմի. այն միշտ կարիք ունի խնամքի և վերանորոգման*

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 3 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 60.000 դրամ
5. Որակավորումը՝ փականագործ՝ ավտոմոբիլների նորոգման




# Խոհարարական գործ



## Խոհարար - մասնագիտություն նրանց համար, ովքեր սիրում են <<ուտել-խմել>>

1. Ընդունելությունն իրականացվում է հիմնական կրթության հիմքով
2. Ուսման տևողությունը՝ 3 տարի
3. Կրթության ձևը՝ առկա
4. Տարեկան վարձը՝ 60.000 դրամ
5. Որակավորումը՝ խոհարար

Դիմումները պետք է լրացվեն առցանց եղանակով՝ https://dimord.emis.am/ էլեկտրոնային միասնական հարթակում:

Դիմորդների կողմից դիմում հայտերը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կարող են փոփոխվել մինչև գործերի ընդունման օրվա ավարտը:

Դիմորդը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում էլեկտրոնային եղանակով լրացնում է դիմում-հայտը,որն իր մեջ ներառում է

անձնական տվյալները

Հանրային ծառայության համարանիշը

օրենքով սահմանված կարգով ՀԾՀ-ից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը

# Դիմորդը կից ներբեռնում է նաև՝

լուսանկար 3x4 չափի

կրթության մասին փաստաթուղթը/դիպլոմի դեպքում նաև ներդիրը/

անձը հաստատող փաստաթղթի պատճենը / անձնագիր, կամ ծննդյան վկայական՝մինչև 16 տարեկան դիմորդի համար,կամ զինվորական գրքույկ, կամ ՀՀ ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,կացության վկայական,փախստականի վկայական/

կցագրման վկայականի պատճենը /զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում/

# Դիմորդը կից ներբեռնում է նաև՝

- ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը/առկայության դեպքում/
- իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը/առկայության դեպքում/,ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը/առկայության դեպքում/
- միջազգային և հանրապետական մրցույթների/օլիմպիադաների, փառատոնների/ դիպլոմների պատճենները/առկայության դեպքում/
- աշխատանքի վայրից տեղեկանքի պատճենը /առկայության դեպքում/
- դիմում-հայտ ներկայացրած ուսումնական հաստատության հաշվեհամարին / ՀՀՖՆԳՎ Հ/Հ900138000154 / փոխանցած գումարի / միջին մասնագիտական կթրության մասնագիտությունների համար՝1000 դրամ /անդորրագրի պատճենը

Ընդունելության կարգի մասին մանրամասն և ամփոփ տեղեկատվություն կգտնեք մեր ֆեյսբուքյան էջի տեղեկացնող հրապարակումներում:

[https://www.facebook.com/profile.php?id=100057805623454](https://www.facebook.com/profile.php?id=100057805623454)



# Մինչ Չարենցավանի պետական քոլեջի 2025-2026թթ. ուս. տարվա ընդունելության մեկնարկը՝

- այցելե՛ք մեր ֆեյսբուքյան էջ և ծանոթացե՛ք քոլեջում առկա մասնագիտություններին
- ընտրե՛ք Ձերը
- պատրաստե՛ք ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը
- հետևե՛ք մեր ֆեյսբուքյան էջին ընդունելության մեկնարկի ազդարարումը բաց չթողնելու համար

# ԿԱՊ ՄԵՋ ՀԵՏ

0226/ 4-32-82
077-59-96-75
093-59-96-76
077-055-155

Չարենցավանի պետական քոլեջ

qoleg1964@mail.ru

Ք. Չարենցավան, Խորենացի 1





Անցիր քո
մասնագիտական ուղին
մեզ հետ....




## ԳՏԻՐ ԿՈՉՈՒՄԴ, ԱՊՐԻՐ ԵՐՋԱՆԻԿ



Մասնագիտություն ընտրելու
<<վերջնարդյունքը>>երջանիկ
և բավարարված լինելն է

<<Գտեք մի բան ,որը ձեզ դուր է
գալիս անել, և հետո գտեք մեկին,
ով ձեզ դրա համար կվճարի>>

# Շնորհակալություն